

ՀՈՂՎԱԾՆԵՐ



ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՂԱՊՏԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒ

Գ. Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Երբ մարդ չգիտի, թե դեպի որ նավահանգիստն է ուղղվում,
ճրա համար ոչ մի քամի էլ համընթաց չի լինի:

Սենեկա

Անցումային հասարակությունը սոցիալական դինամիկայի առանձնահատուկ փուլ է, որի ավարտից հետո ձևավորված սոցիոմշակութային նոր համակարգը գոյության և վերարտադրության, գործառության ու զարգացման սկզբունքորեն նոր հիմունքներ է ձեռք բերում: Համակարգային ճգնաժամի իրավիճակում հայտնված սոցիալական ամբողջը գործառության օպտիմալ ուղիների փնտրտուքի ճանապարհին հայտնվում է էվոլյուցիոն կամ արմատական տրանսֆորմացիայի պարտադրանքի առջև: Համակարգային տրանսֆորմացիան անտրոպոսոցիետալ և սոցիոմշակութային փոփոխությունների տևական սոցիալական գործընթաց է, որի էլքն ու ցանկալի վախճանին հասնելու ներուճակությունը հաճախ անորոշ ու անկախատեսելի են: Որպես կանոն դժվար է կանխորոշել պատմության համար ակնթարթ թվացող տրանսֆորմացիոն փուլի գործունեական ավարտը: Մինչդեռ իր գոյության վերջավորությունը գիտակցող մարդու, առավել ևս հասարակության ու պետության համար այդ փոփոխությունների տևողությունը և, որ ամենակարևորն է, սոցիալական գինը բոլորովին էլ զուտ տեսական, իսկ առօրյա մակարդակում հերթապահ հարցեր չեն: Ուստի այդ պայմաններում ապրելու տառապանք-պարտադրանքը, անորոշ, անկանխատեսելի, անկայուն իրավիճակներին մշտապես ադապտվելու անցանկալի հրամայականը, կարգին ու որոշակիությանը, հուսալիությանը և կանխատեսելիությանը սովոր սոցիալական սուբյեկտներին անընդհատ պահում են լարված, տագնապալի վիճակում: Այսպիսին է փոխակերպվող հասարակության տրանսֆորմացիոն տրամաբանությունը: Ուստի դրա իմաստավորման անհրաժեշտությունը պահանջում է որոշարկել տրանսֆորմացիոն իրականությանը հարմարվելու և ադապտիվ-ադապտացիոն գործունեություն ծավալելու հնարավորությունները, այսինքն՝ պարզաբանել սոցիոմշակութային ադապտացիայի առանձնահատկություններն անցումային հասարակությունում¹:

¹ Գրականության մեջ տրանսֆորմացիոն հասարակությունում ադապտացիայի արդյունքը գերազանցապես ներկայացվում է միայն սոցիալ-տնտեսական առնչությանը՝ բոլորովին անտեսելով խնդրի սոցիոմշակութային տեսանկյունը: Տե՛ս «Кризисный социум: наше общество в трех измерениях», Москва, 1994; **Л. В. Корель**, Социология адаптаций: этюды апологии, Новосибирск, 1997; **Т. Н. Вершинина**, Рынок труда переходного периода и проблемы адаптации к нему трудоспособного населения // Общество и экономика: социальные проблемы трансформации, Новосибирск, 1998; **Г. А. Монусова**, Промышленные рабочие в России: адаптация, дифференциация, мобильность, «Социологический журнал». 1998, № 1-2; **А. С. Готлиб**, Социально-экономическая адаптация россиян: опыт сочетания количественной и качественной методологии в одном отдельно взятом исследовании // Социология. Москва, 2000, № 12; **Արվիդ** Социально-экономическая адаптация россиян: факторы успешности-неуспешности, «Социологические исследования», 2001, № 7; **Л. А. Беляева**, Стратегии выживания, адаптации, преуспевания, «Социологические исследования», 2001, № 6:

Սոցիալական փոփոխությունները սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում գործառության տարբեր արագություն, ուրիշ և տեմպ են դրսևորում: Ամենից արագ տրանսֆորմացիայի է ենթարկվում իրավական ոլորտը, և ազգային-պետական կեցության հիմունքները, օրենսդրական նոր ձևակերպում ստանալով, իրավական տեսանկյունից ազդարարում են համակարգի «անցումային» կարգավիճակի ավարտը: Միևնույն գործունեական առնչությամբ իրավական նոր հիմունքներ ունեցող համակարգը դեռ երկար ժամանակ պահպանում է իր «անցումային» կարգավիճակը, քանի որ հասարակության սոցիոմշակութային ոլորտը, պահպանողական լինելով, կատարվող տրանսֆորմացիոն փոփոխությունների հանդեպ առավել իներտ է, դժվարահաճ և ավանդապահ²:

Ներկա հողվածով փորձում ենք պարզաբանել, թե ինչպես է իրականացվում և ինչ առանձնահատկություններ է դրսևորում սոցիոմշակութային աղապտացիան սոցիումի գոյության ու գործառության անցումային փուլում:

Առաջիններից մեկը, որը նախաձեռնել է ճգնաժամի պայմաններում հասարակական արժեքների և նորմերի ապակայունացման, քայքայման, այսինքն՝ դասական անոմիայի գիտական ուսումնասիրությունը, եղել է ամերիկացի հանրահայտ գիտնական Ռ. Մերտոնը: Նա տարբերում է տրանսֆորմացիոն հասարակությունում ապրող մարդու սոցիալական վարքի, այսինքն՝ փոխակերպվող իրականության նկատմամբ աղապտացիայի հինգ տիպ՝ կոնֆորմիզմ, նորարարություն (ինովացիա), ծիսականություն (ոիտուալիզմ), անտեսում (ոնտրիստիզմ) և խոտվություն³:

Կոնֆորմիզմը փոխակերպվող իրականությանն ադապտվելու այնպիսի եղանակ է, երբ անհատն ընդունում է ինչպես պաշտոնական քաղաքական նպատակները, այնպես էլ դրանց հասնելու օրինական, ինստիտուցիոնալ միջոցները: Տրանսֆորմացվող իրականության բնականոն, հարաբերաբար կայուն փուլերի համար ադապտացիայի այս տիպն առավել տարածված է, և դա պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշակի համապատասխանություն գոյություն ունի սոցիոմշակութային նպատակների և դրանց իրականացման ինստիտուցիոնալ միջոցների միջև: Ջարգացած ժողովրդավարական հասարակություններում գլխավոր քաղաքական նպատակն անձի իրավունքների և ազատությունների ապահովումն է, և դա ինքնանպատակ չէ, քանի որ քաղաքական լիզերների իշխանությունը կախված է ազգաբնակչության լայն զանգվածների գործունե աջակցությունից: Ահա թե ինչու վարքի համընդհանուր կողմնորոշմանը հիմնականում բնորոշ են նպատակներին հասնելու օրինական, ինստիտուցիոնալ միջոցները, իսկ դա բոլորովին էլ չի նշանակում, թե այստեղ բացառվում են վարքի ընդունված, մշակութային կարգից շեղվող, ոչ ինստիտուցիոնալ միջոցներն ու եղանակները:

Միանգամայն այլ է վիճակը համակարգային տրանսֆորմացիաների փուլում գտնվող հետխորհրդային հասարակությունների պարագայում: Այստեղ ընդհուպ մինչև XX դարի 90-ական թվականները մարդիկ ապրել են քաղաքական և սոցիոմշակութային արժեքային այնպիսի համակարգում, ուր գերիշխել է գործառության ավտորիտար-բռնապետական ոճը, որտեղ ոմանց համար սովորական էր դարձել «բարի ցանկությունների» մասին հրապարակավ ստելն անգամ այն դեպքում, երբ հստակորեն գիտակցվում էր դրանց անիրագործելիությունը, մյուսները, գոյություն ունեցող հարաբերությունների դեմ մերթ խոտվելով, մերթ խաղաղվելով, գիտակցելով հանդերձ, որ իրենց խաբում են, այնուամենայնիվ հաշտվում էին օտար իշխանության պարտադրանքի

² Տե՛ս օրինակ, Ու. Օգբորնի «մշակութային լագերի» տեսությունը և Ռ. Դարենդորֆի «երեք ժամացույցների» վարկածը. W. Ogburn, On Culture and social change. Ed. by O. D. Duncan. Chicago, 1964, R. Dahrendorf, Reflections on the revolution in Europe. New York, 1990:

³ Տե՛ս **Р. Мертон**, Социальная структура и аномия, “Рубеж”, 1992, No 2:

հետ, երրորդները հենց իրենք դեմ չէին, որ իրենց խաբեն, և ոչինչ չէին ձեռնարկում իրենց իրավունքների պաշտպանության համար: Մարդու նկատմամբ պետական իշխանության առաջնայնությունը, ժողովրդի կարիքների ու հոգսերի նկատմամբ «սրտացավ» վերաբերմունքի մասին կուսակցապետական խաբեությունն ու ինքնախաբեությունը դարձել էին սոցիալական վարքի հիմք և գործունեության գերակա եղանակ: Ընդ որում, սոցիալական մեծ վարքը ընկալվում էր որպես նորմատիվ, քանի որ սոցիալ-քաղաքական բոլոր գործառույթներն այսպես թե այնպես արդարացվում էին «բարձրագույն նպատակահարմարությամբ»:

Հետխորհրդային տարածքում իրականացված սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային տրանսֆորմացիաների հետևանքով անզամ ազատական-ժողովրդավարական արժեքային համակարգի պայմաններում գոնե իրավական մակարդակում առաջնայնության ընդունման դեպքում դեռևս զգալի է անցյալի ժառանգության ազդեցությունը: Նոր պայմաններին և արժեքային համակարգին հարմարվելու, ադապտիվ-ադապտացիոն գործունեություն ծավալելու ամենաանկեղծ ցանկության դեպքում թե իշխանության ներկայացուցիչները, թե շարքային քաղաքացիներից շատերը դեռևս չեն կարողանում հրաժարվել ավանդական, փակ հասարակությանը բնորոշ բազմաթիվ ստերեոտիպներից (հատկապես «քաղաքականություն հանուն պետության» սկզբունքից): Մինչև այժմ էլ ոմանց շատ հարազատ է «ուժեղ ձեռքի» քաղաքականությունը, այն քաղաքականությունը, որն անմիջականորեն հենվում է պետական, իշխանական խիստ կառույցների վրա, որոնք ըստ էության մարդկանց պարտադրում են վերևից հանձնարարված և առավել քան վերահսկելի գործառույթներ ու սոցիալական դերեր: Նման մարդիկ դժվարությամբ են ընդունում ժողովրդավարական ազատ հասարակությանը բնորոշ «քաղաքականություն հանուն մարդու» սկզբունքը: Արժեքային նախկին կողմնորոշումների բեռն այդ մարդկանց թույլ չի տալիս ապրելու ազատության՝ որպես մարդու անկապտելի իրավունքի արժեքային գերակայության գիտակցությամբ: Նման իրավիճակը հանգեցնում է թե՛ անհատական, թե՛ հասարակական գիտակցության այլազան փոխակերպումների⁴:

Փոխակերպվող սոցիալական իրականությանն ադապտվելու առանձնահատուկ եղանակ է նորարարությունը: Այս դեպքում մարդիկ համակարգային փոփոխությունն ընդունում են որպես անըջելի իրողություն և տրանսֆորմացիոն փոխակերպումների պարտադրված խեղումները մեղմելու համար փորձում են սոցիալական համակարգում փոխել իրենց դիրքը, այսինքն՝ ընդունում են նոր մշակույթի նպատակները, բայց հաճախ մերժում են դրանց հասնելու ինստիտուցիոնալ միջոցները: Նորարարությունը սոցիոմշակութային ադապտացիայի ակտիվ ձև է, որը որպես «կանխամտածված «մշակութային արտադրություն» ձգտում է մասնակիորեն փոխել տվյալ մշակույթը՝ նպատակ ունենալով մեղմել դրա անհամապատասխանությունն այլ մշակույթի կամ մարդկանց ռեալ վարքի նկատմամբ»⁵: Նորարարությունը ենթադրում է նպատակի զգալի կարևորում և, որքան հնարավոր է, ավելի մեծ սոցիալական կապիտալի ձեռքբերում, որն անհրաժեշտ է տրանսֆորմացիոն իրականությունում հուսալի դիրք գրավելու համար, ինչը շատ հաճախ ուղեկցվում է թեպետ արդյունավետ, բայց նպատակին հասնելու համար ինստիտուցիոնալ տեսակետից արգելված միջոցների օգտագործմամբ: Արևմուտքում որպես նորարարական վարքի օրինակ կարող են ծառայել անձնական շահերով առաջնորդվող ճարպիկ

⁴ St'v Ж. Т. Тощенко, *Метаморфозы современного общественного сознания: методологические основы социологического анализа*, "Социологические исследования", 2001, № 6, էջ 3-16:

⁵ St'v П. Штомка, *Социальное изменение как травма*, "Социологические исследования", 2001, № 1, էջ 15:

պղիտիկանները, որոնք պետական և հասարակական բարձր պաշտոնների են հասել «ոչ ստանդարտ» միջոցներով: Սակայն, ընդհանուր առմամբ, Արևմուտքում ձևավորվել է օրինապահ հասարակություն, որն անհանդուրժող վերաբերմունք է դրսևորում ինովացիոն շեղումների նկատմամբ:

Սոցիոմշակութային ադապտացիայի ինովացիոն տիպն առավել քան բնութագրական է համակարգային տրանսֆորմացիայի փուլում գտնվող հետխորհրդային հասարակությունների: Ի տարբերություն արևմտյան քաղաքակրթության օրինապահ հասարակությունների՝ առմիայի վիճակում գտնվող տրանսֆորմացիոն հասարակությունները ներողամիտ վերաբերմունք են դրսևորում իշխանության և հարստության հասնելու ոչ ինստիտուցիոնալ միջոցների նկատմամբ: Համակարգային ճգնաժամի վիճակում գտնվող հետխորհրդային տրանսֆորմացիոն հասարակությունները մաքիավելիզմով առաջնորդվող ճարպիկ արկածախնդիրների առջև գործունեության լայն ասպարեզ են բացում: Փոխակերպվող հասարակությունը վերածվում է ոչ նորմատիվ միջոցներով իշխանության հասնելու լայնածավալ փորձադաշտի, որտեղ պարադոքս է, բայց և փաստ է, որ իրավական նիհիլիզմով համակված, չքավորության եզրին հասած ազգաբնակչության մեծամասնությունը զարմանալի հանդուրժողականություն է դրսևորում շեղվող վարքի նկատմամբ: Ըստ երևույթին, ինովացիան՝ որպես փոխակերպվող հասարակության սոցիոմշակութային ադապտացիայի յուրահատուկ տիպ, կգործադի այնքան ժամանակ, քանի դեռ հասարակության մեջ չի հաստատվել օրենքի աներկբա գերակայության մտակեցվածքը:

Փոխակերպվող հարաբերություններին ու արժեքներին հարմարվելու առանձնահատուկ եղանակ է ծիսականությունը: Սա սոցիոմշակութային ադապտացիայի այնպիսի տիպ է, որի նպատակը վարքի ավանդական, փորձված ձևերի միջոցով վստահության ձեռքբերումն է, նույնիսկ եթե նոր պայմաններում դրանք տանք ու են դեպի փակուղի: Այն անհատական ադապտացիայի այնպիսի ձև է, երբ մարդը մերժում է մշակութային առնչությամբ որոշարկված նպատակները դրանց հասնելու անկարողության պատճառով, սակայն շարունակում է կատարել այդ նպատակներին հասնելու համար նախատեսված ինստիտուցիոնալ կանոններն ու նորմերը: Ծիսականությունը սոցիոմշակութային ադապտացիայի պասիվ ձև է, որը փորձում է նախկին ավանդույթներն ու սովորույթներն օգտագործել որպես տրանսֆորմացիոն խեղումներից պաշտպանվելու հոգեբանական հուսալի ապաստարան: Այն ենթադրում է վարքի այնպիսի ձևերի գործառություն, որի դեպքում առավելագույնս պետք է նվազեցվի սոցիալական կամ քաղաքական կապիտալի ձեռքբերման անհրաժեշտությունը: Արևմտյան տիպի ազատական բաց հասարակություններում, ուր գոյություն ունի քաղաքացիական ակտիվության ավելի բարձր մակարդակ, քաղաքացին բոլորովին էլ պարտադիր չի համարում իր մասնակցությունը իշխանական այլևայլ կառույցներին: Ըստ երևույթին, վարքի նման տիպը պայմանավորված է այն հանգամանքով, որ այնտեղ տնտեսական հարաբերություններն անջատված են քաղաքականությունից, և քաղաքական լիդերների իշխանությունն ինքնին չի երաշխավորում նյութական բարիքների ստացում:

Հետխորհրդային տրանսֆորմացիոն հասարակություններում սոցիոմշակութային ադապտացիայի ծիսական ձևը նոր առանձնահատկություններ է ձեռք բերում: Խորհրդային արժեքային կողմնորոշումների առանցքն «ակտիվ» սոցիալ-քաղաքական դիրքորոշումն էր, և ավանդական ստերեոտիպ էր դարձել «քաղաքականությունը յուրաքանչյուրի գործն է» սկզբունքը, ուստի քիչ թե շատ բարձր սոցիալական ստատուսն անպայմանորեն ենթադրում էր «ակտիվ» կենսադիրքորոշում՝ և հատկապես ԽՄԿԿ անդամակցություն: Հետսոցիալիստական տրանսֆորմացիոն հասարակություններում հիմնականում փոխվել է կուսակցականությունը որպես սոցիալ-քաղաքական ակտիվության չափանիշ ընկալելու հանգամանքը: Տրանսֆորմացիոն ոգևորությանը հաջորդած տրանսֆորմացիոն ահավոր հիասթափությունը նորմատիվ դարձրեց ոչ թե սո-

ցիալ-քաղաքական ակտիվությունն ու խիզախ նախաձեռնությունը, ինչը բնորոշ էր հասարակական փոխակերպումների առաջին փուլին, այլ սոցիալական չեզոքության ու չմասնակցության, կրավորականության ու անտարբերության անհատական դիրքորոշումները: Քաղաքական ապատիայի վիճակում գտնվող, ապագայի հանդեպ մտալ հայացքով համակված, կասկածն ու անվստահությունը հարաբերվելու եղանակ դարձրած, անցյալի կարոտախտով տառապող տրանսֆորմացիոն հասարակության մարդն իր փրկության եզրը և փոխակերպվող իրականությանը հարմարվելու եղանակը փորձում է գտնել վարքի ավանդական, ծիսական ձևերում: Նա էպիզոդիկ մասնակցություն է ցուցաբերում հասարակական-քաղաքական կյանքին, սակայն քաղաքական ակտիվության նվազումը հասարակության համար չի վերածվում սոցիալական պրոբլեմի, քանի որ սոցիոմշակութային ադապտացիայի ծիսական ձևի հետևորդների գործողությունները չեն անցնում ինստիտուցիոնալ թուլյա տրեվիության սահմանները: Գործազուրկների հոծ շարքերը համալրելու մշտական սպառնալիքը կաշկանդում է ազգաբնակչության զգալի մասի սոցիալ-քաղաքական ակտիվությունը: Վարքի ծիսական ձևը բնորոշ է դառնում նաև մշակույթի և գիտության ոլորտի որոշ ներկայացուցիչների համար, որոնք, իբրև կանոն, լինելով օրինական, առավելաբար ինստիտուցիոնալ նորմերի կողմնակից, հարկադրված են իրենց հույսը կապել միայն պրոֆեսիոնալ գործունեության հետ՝ ապավինելով մասնագիտական որակների, սեփական աշխատանքին և ինտելեկտին:

Սոցիոմշակութային ադապտացիայի պասիվ եղանակ է **ռետրիատիզմը**, երբ մերժվում են ինչպես սոցիոմշակութային պաշտոնական նպատակները, այնպես էլ դրանց հասնելու ինստիտուցիոնալ միջոցները: Այս դեպքում տրանսֆորմացիոն խեղումները մեղմելու նպատակով մարդիկ փոխակերպվող հարաբերությունների ու արժեքների հետ հաշտվելու համար ամփոփվում են իրենց մեջ: Գոյության մարզիմալ վիճակը ռետրիատիստական ադապտացիայի սովորական ձև է: Տրանսֆորմացիոն ձևախեղումներին բախված, հույսի և հավատի պակասից տառապող որոշ մարդիկ, սպասողական դիրք գրավելով, դառնում են ճակատագրապաշտներ, ապավինում միայն կույր նախախնամությանը: Մյուսները, անցյալի կարոտախտով համակված, ծանր ու անորոշ ներկայի համար մեղադրում են ժողովրդավարությունն ու կապիտալիզմը (Հայաստանի պարագայում՝ անկախությունը), իրականացվող բոլոր բարեփոխումները ներկայացնում որպես «թալան ու երկրի վաճառք», գլոբալ մշակույթի մեջ ազգային արժեքների տարրալուծում, կախյալ ու դիմազուրկ գոյություն: Ահա թե ինչու սոցիոմշակութային ռետրիատիստական ադապտացիայի դեպքում փոխակերպվող հարաբերությունների ու արժեքների մեջ ներառվելու եղանակ է դառնում դրանց անտեսումը: Սովորաբար ռետրիատիստական ադապտացիայի սուբյեկտի դերում հանդես է գալիս հասարակության լյումպենացված մասը⁶: Կայուն հասարակություններում, որպես կանոն, ադապտացիայի նման տիպը հաճախ չի հանդիպում (ինչը, սակայն, չի նշանակում, թե այն ընդհանրապես գոյություն չունի): Մինչդեռ ճգնաժամային հասարակություններում տրանսֆորմացիոն հիասթափությամբ համակված անգամ սոցիալապես առողջ որոշ մարդիկ կատարվող վերափոխումների նկատմամբ դրսևորում են բացասական վերաբերմունք և չունենալով դրանց հակազդելու ո՛չ վճռականություն, ո՛չ կամք՝ նախընտրում են դրանց անտեսումը՝ չմասնակցությունը դարձնելով հարմարման եղանակ: Այսպես, հետխորհրդային տրանսֆորմացիոն հասարակությունների ազգաբնակչության մի մասը, լիովին կորցնելով հավատը «հին» կոմունիստական արժեքների նկատմամբ, դեռևս չի ընտրել այլ իդեալներ: Մյուսները, «արդար» ու «թափանցիկ» իրարահաջորդ ընտրություններից հոգնած, տրանսֆորմացիոն հիասթափության վիճակում, կարծում են, որ իրենց մասնակցությունը հասարակության սոցիալ-քաղաքական կյանքում

⁶ Տե՛ս P. Մերտոն, նշվ. աշխ., էջ 95:

ոչինչ չի փոխելու, ուստի և իրականությունից փախուստ-փրկությունը (էսկապիզմ), սեփական մորթ-կաղապարի մեջ ամփոփվելը, սպասողական դիրքը փոխակերպվող հարաբերությունների ու արժեքների մեջ ներառվելու հարմարվողական նախընտրելի եղանակն է: Նման դեպքերում բոլորին համակած քաղաքական ապատիան դրսևորվում է որպես սոցիալական իմոբիլություն, որի արդյունքը շատ հաճախ լինում է արսենտիզմը⁷: «Արհեստների մեջ ամենահինը պոռնկությունն է. պոռնկությունների մեջ ամենանորը՝ քաղաքականությունը» տեսակետի կողմնակիցները ցուցադրաբար խուսափում են դրսևորել հասարակական-քաղաքական որևէ ակտիվություն՝ ասպարեզը թողնելով մարտընչող միջակությանը և պրագմատիկ արկածախնդիրներին: Արդյունքում մարդը, օտարվելով հասարակությունից, նախընտրում է ապրել անհրակամ, վիրտուալ մի աշխարհում, որն ընկալվում է ոչ թե որպես խաղաղություն ու հոգեկան անդորր պարզևող վիճակ, այլ որպես փախուստ դեպի էկզիստենցիալ ապաստարան: Պատահական չէ, որ սոցիոմշակութային ռիտրիատիստական աղապտացիայի ժամանակ այդքան բազմանում են կրոնական փակ աղանդները, իսկ դրանց շարքերն անընդհատ համալրվում են սոցիալապես հավատագրուրկ, հիասթափված ու հոգնած մարդկանցով: Ծայրահեղ դեպքերում ճգնաժամային հասարակություններում աղապտացիայի եղանակ է դառնում սուիցիդը⁸:

Ծառ հետաքրքիր, բայց դեռևս չուսումնասիրված իրողություն է երիտասարդության ռետրիատիստական աղապտացիան, որն արդի պայմաններում բնորոշ է ինչպես սոցիետալ կայունություն ունեցող հասարակություններին, այնպես էլ ճգնաժամային:

Սոցիոմշակութային ակտիվ աղապտացիայի առանձնահատուկ ձև է խոռվությունը, որը տրանսֆորմացիոն ինդուլմենտը մեղմելու և գոյություն ունեցող սոցիետալ համակարգն արմատապես բարեփոխելու նպատակով որդեգրում է գործունեության պաշտոնապես ոչ խրախուսելի, հակաինստիտուցիոնալ միջոցներ: Ոչ նորմատիվ սոցիալական վարք դրսևորող մարդկանց կարելի է հանդիպել ցանկացած հասարակության մեջ: Որպես կանոն՝ նման մարդիկ կարծում են, որ միայն անսովոր, բացառիկ քաղաքական միջոցներով (ահաբեկչություն, հացադուլ, ինքնահրկիզում, պատանդ վերցնել) կարելի է հասնել ցանկալի արդյունքների: Խոռվությունը որպես սոցիոմշակութային աղապտացիայի ձև ընտրած մարդիկ իրենց գործողությունները ներկայացնում են որպես պայքար «հանուն բարձրագույն արդարության» հաստատման: Ըշմարտությունը մենաշնորհած. սոցիալական անհանդուրժողականությամբ և անխալակաճության հիվանդագին գիտակցությամբ տառապող այդ մարդկանց համար ծայրահեղականությունը վարքի գերակա եղանակ է⁹:

Վարքի միասնական մոտիվացիա և արժեքների ընդհանուր համակարգ ունեցող հասարակության համար աղապտացիայի խոռվարարական տիպն այնքան էլ բնորոշ չէ, մինչդեռ անցումային հասարակությունների համար, ուր անոմիան սովորական վիճակ է, հասարակական հարաբերությունների մեջ ներառման խոռվարարական, ծայրահեղական եղանակը դառնում է բավականին տարածված սոցիալական երևույթ, ինչը մտահոգության լուրջ տեղիք է տալիս: Ոչ նորմատիվ սոցիալական վարքը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից ամենակարևորներն են.

⁷ Տե՛ս «Основы политической социологии», Н. Новгород, 1998, էջ143-144:

⁸ Տե՛ս **И. Е. Левченко**, Феномен социальной смерти, "Социологические исследования", 2001, № 6:

⁹ Հոկտեմբերի 27-ի ռճրագործությունը խոռվարարական տիպի սոցիոմշակութային աղապտացիայի տիպական դրսևորում է: Տխրահուշակ խմբի պարագլուխը մինչև այժմ էլ կարծում է, թե իրենց արարքի դրդապատճառը համազգային բարօրության հաստատման բացարձակ մտահոգությունն էր: Վարքի խոռվարարական եղանակի ու միջքաղաքակրթական անհանդուրժողականության ծայրահեղ դրսևորումներ էին մահ 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահասարսուռ իրադարձությունները:

1. Ազգաբնակչության տնտեսական և սոցիալական վիճակի կտրուկ վատթարացումը,
2. Հասարակության զգալի մասի մարգինալացումը,
3. Ոչ լեգիտիմ սոցիալական շերտավորումը,
4. Սոցիալական կամ էթնիկական հակամարտությունների սրումը,
5. Իշխանական որոշ կառույցների ոչ ֆունկցիոնալությունը,
6. Իրենց նկատմամբ կասկածն ու անվստահությունը¹⁰:

Ըստ ամենայնի սոցիալական վարքի խոռվարարական տիպն ընդհանրապես վերացնել հնարավոր չէ: Համենայն դեպս մինչև այժմ դա չի հաջողվել աշխարհի ոչ մի երկրի, սակայն պրոբլեմները նվազագույնի հասցնել հնարավոր է. դա թեպետ ոչ դյուրին, բայց իրագործելի խնդիր է: Դրա համար անհրաժեշտ է, որ լինի մարդու անտրոպոսոցիետալ բնույթին համապատասխանող արժեքային համակարգ, որը նրան հնարավորություն կընձեռի լինել ազատ, այսինքն՝ հասարակական հարաբերությունների մեջ ներառվել ոչ թե տնտեսական, քաղաքական կամ սոցիալական հարկադրանքից էլնելով, այլ էությունական ուժերի անարգել դրսևորման համար: Սոցիոմշակութային հավասարակշռության դեպքում հնարավոր կլինի ապահովել նորմատիվ վարքի գերակայությունը:

Անցումային հասարակություններում, ուր ճգնաժամային երևույթները կյանքի մշտական ընթացակիցներ են, և մշտապես առկա է անորոշության վախը, էկզիստենցիալ անվտանգության հասնելու մարդկանց բնական ձգտումը ուղեկցվում է ռիսկով: Սա բոլորովին էլ չի նշանակում, թե կայուն հասարակություններում մարդիկ իրենց կյանքի ընթացքում ավելի քիչ էին ռիսկի դիմում, քան փոխակերպվող հասարակություններում: Խնդիրն այն է, որ սկզբունքորեն փոխվում են ռիսկի որակը և դրսևորման դաշտը: Ռիսկի տերմիններով մտածողությունն անընդհատ ծանրաբեռնելու հարկադրանքը հատկապես սրվում է սոցիոմշակութային անհավասարակշիռ վիճակում գտնվող տրանսֆորմացիոն հասարակություններում: Մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներն, առանց բացառության, կապվում են հնարավոր և անհնար ռիսկերի անընդհատ հաշվարկի հետ, ինչը փաստորեն վերածվում է սոցիալական սուբյեկտների հետ հարաբերվելու, փոխակերպվող արժեքների ու հարաբերությունների մեջ ներառվելու սոցիոմշակութային դետերմինանտի: Կարգին ու սովորույթին, որոշակիությանն ու հաջորդայնությանը սովոր կայուն հասարակության մարդը սոցիալական դինամիկայի տրանսֆորմացիոն փուլում ձգտում է առավելագույնս կանխատեսել բոլոր հնարավոր ռիսկերը, ինչը, սակայն, նրան չի ազատում մշտական տագնապի զգացումից: Խնդիրն ավելի է բարդանում, երբ հակասության մեջ են մտնում ավանդական (տարերային աղետներ, դժբախտ դեպքեր, համաճարակներ) և տրանսֆորմացիոն (կոնկրետ քաղաքական որոշումների ընդունում, ընտրապայքարի հետևանքներ, հաճախադեպ կոնֆլիկտների կարգավորման ընտրության եղանակներ) ռիսկերը: Ի տարբերություն անտրոպոսոցիետալ հավասարակշռության վիճակի՝ տրանսֆորմացիոն հասարակություններում հատկապես մեծանում է իմաստիտոցիոնալ ռիսկերի քանակը: Տեղի է ունենում ռիսկային իրավիճակների անընդհատ նորացում, ինչը պայմանավորված է զարգացման այլընտրանքային ռազմավարական ուղիների մշտական որոնմամբ: Այս ամենը տրանսֆորմացիոն լարվածության մեջ գտնվող մարդու թե՛ առօրյա և թե՛ սոցիալական կյանքը վերածում է ամենատարբեր ռիսկերի իմաստավորման և անընդմեջ հաշվարկի: Նվազ կարևոր չէ նաև տրանսֆորմացիոն ռիսկի գործառության մի այլ տեսանկյունը ևս: Եթե կայուն հասարակություններում, որպես կանոն, մարդն ապավինում էր ճակատագրին կամ գերբնական ուժերին, առաջնորդի «իմաստնությանը» կամ

¹⁰ Տե՛ս Գ. Կ. Ашин, Э. Д. Лозанский, С. А. Кравченко, Социология политики. Сравнительный анализ российских и американских политических реалий, Москва, 2001, էջ 102-103:

կուսակցության անսխալականությանը, ապա սոցիետալ փոխակերպումների արդի ժամանակներում նա իր համար կենսական նշանակություն ունեցող հարցերը լուծելիս (տրանսֆորմացիոն ընտրություն) պետք է ապավինի բացառապես իրեն՝ հենվելով միայն սեփական սոցիալական փորձի և ինտուիցիայի վրա:

Իրականապես գոյության պայմաններում տեղի է ունենում հասարակական իդեալի արժեզրկում, ինչը գոյատևման ելքի փնտրտուքներով զբաղված տրանսֆորմացիոն մարդուն ստիպում է կառչել կեցության փշրանքներից, օտարվել չարացած ուրիշներից, փակվել ինքն իր մեջ: Փոխակերպվող հասարակության մեջ փաստորեն հասարակական հարաբերությունների ու արժեքների գոյության բնական կերպն աստիճանաբար ձևախեղվելով՝ հասնում է մինչև օտարման, մինչև հասարակական հարաբերությունների առարկայական-իրային կողմի գերիշխանության: Արդյունքը լինում է այն, որ ստեղծվում և անընդհատ խորանում է հակասությունը մարդու գոյության և էության միջև: Հասարակական գոեհկությունը, կյանքի անորոշությունից սերված հոգեբանական դեպրեսիան գնալով այլանդակում են տրանսֆորմացիոն հասարակության շփոթված մարդուն, հավատաթափ անում, դարձնում կենսաբանական ստացվածք, երբ մարդու էությունը վերածվում է գոյության, իսկ գոյությունը՝ էության, ժողովուրդն աստիճանաբար ամբոխանում է: Առաջ է գալիս բոլորովին նոր տիպի անհատ՝ «մարդ-մասսան»¹¹, որն առնչվելով շուկայական-ազատական հարաբերությունների ու քաղաքական քառային պայքարի բնագավառներում կամայականությունների ու հակասորինական մենաշնորհման երևույթներին՝ աստիճանաբար բացասաբար է տրամադրվում շրջապատի վերափոխման ցանկացած նախաձեռնության հանդեպ: Տրանսֆորմացիոն հասարակության հարափոփոխ հարաբերություններին ու արժեքներին սոցիոմշակութային առնչությամբ աղապտվելու ամենակույ եղանակ է դառնում «մարդ-մասսան»: Այն ոչ թե ազգային, դասակարգային և կամ սոցիալական հասկացություն է, այլ զուտ հոգեբանական: «Մարդ-մասսան» նա է, - գրում է Օրտեգա-ի-Գասետը, - ով չի կարող իրեն գնահատել ինչպես վատ, այնպես էլ լավ կողմից, դա նա է, ով իրեն զգում է «այնպես, ինչպես բոլորը» և դրա համար դույզն-իսկ ապրումներ չի ունենում: Նրան դուր է գալիս «իրեն զգալ այնպես, ինչպես բոլորը»¹²:

«Մարդ-մասսան» իր նկատմամբ պահանջկոտ չէ, չի ձգտում ինքնակատարելագործման, նախընտրում է չբարդացնել կյանքը, հակված է լողալ հոսանքի ուղղությամբ: Ամբողջությամբ համակված լինելով լուծել միայն սեփական նյութական պրոբլեմները՝ իրենից զատ չի ընդունում որևէ այլ հոգևոր հեղինակություն: Մարդ-մասսան տրանսֆորմացիոն հասարակության ժամանակակից մարդու միջին տիպն է և որպես այդպիսին գործառու է սոցիալական կառուցվածքի բոլոր մակարդակներում: Այն հազվադեպ երևույթ չէ նաև ինտելեկտուալ շրջանակներում: Մարդ-մասսա դարձած երկշտ «մտավորականի» համար հերոսն արկածախնդիր է, երազողը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ: Քաղաքացիորեն անարի մտավորականների մեղքով է, որ, ինչպես Գ. Նժդեհն է ասում, «աղվեսները աղյուծներ են խեղդում, սինլըրները Հիսուսներ են խաչում»¹³: Մարդ-մասսան որևէ ներքին պահանջմունք չունի իր արարքները բարձրագույն հոգևոր արժեքներով հագեցնելու, նրան անծանոթ ու խորթ են ոգու կարգապահությունն ու սեփական անձի նկատմամբ խստապահանջությունը: Նա հակաինտելեկտուալ է և անկառավարելի, ոչ այլոց

¹¹ «Մարդ-մասսա» հասկացությունը շրջանառության մեջ է դրել իսպանացի մտածող Խ. Օրտեգա-ի-Գասետը: Տե՛ս X. **Ортега-и-Гассет, Дегуманизация искусства и другие работы**, Москва, 1991:

¹² Նույն տեղում, էջ 43-44:

¹³ Նժդեհ, **Բաց նամակներ հայ մտավորականության, Եր.**, 1998, էջ 153:

իրավացիությունն է ուզում ընդունել, ոչ ինքն է ուզում իրավացի լինել. նա պարզապես կամ իր կարծիքն է պարտադրում մյուսներին, կամ կորորեն հարում է ընդունված կարծիքին: Միևնույն ժամանակ նա լիցքավորված է ուժականությամբ և եռանդով, աշխարհն ընկալում է որպես էներգիայի ու նախաձեռնության ներդրման անսահմանափակ ասպարեզ: Իհարկե մարդ-մասսայի նկարագիրը խիստ պայմանական է, և դժվար է գտնել կոնկրետ որևէ մեկին, որն ամբողջությամբ համապատասխանում է վերոնշյալ բնութագրին. նրա բնութագծերը հանդիպում են ամենուր, և միաժամանակ կարծես թե նա ոչ մի տեղ չկա: Դա բացատրվում է նրանով, որ հենց իր՝ մասսայի մարդու մեջ առկա է ինքնավերափոխման, ինքնահաղթահարման հնարավորությունը:

Այսպիսով, իրավական ազատությունների լաբիրինթոսում մոլորված, անձնական մեղքի գիտակցությունից «ձերբազատված», բայց սոցիալական համամեղսակցության արդարացում-փրկողակով զինված տրանսֆորմացիոն հասարակության մարդ-մասսան արագորեն փոխակերպվող հարաբերություններին ու արժեքներին ադապտվում է անփույթ «պատասխանատվության» սոցիոմշակութային մակերեսային հիմունքներով: Ռուս մտածող Ա. Ս. Պանարինն այս երևույթը ներկայացնում է որպես միջմշակութային փոխանակության պարադոքս¹⁴: Անհամբերության էներգիայով լիցքավորվող անցումային հասարակությունն առաջնորդվում է «ուժ նմանվել» հրամայականով: Կործանված խորհրդային կայսրության արժեքային ու սոցիոմշակութային վակուումը շտապում է լցնել Արևմուտքը: Արդյունքում տրանսֆորմացիոն հասարակության շփոթված և հեշտասեր մարդ-մասսան հայտնվում է մասսայական մշակույթի ամենակույ ճիրաններում: Ինչպես նկատել է Ա. Թոյնբին «Միմեսիսի (նմանակման) թերությունն այն է, որ ենթադրում է օտար փորձից փոխառված մեխանիկական պատասխան, այսինքն միմեսիսի միջոցով մշակված գործողությունը չի ենթադրում սեփական ներքին նախաձեռնություն»¹⁵: Մինչդեռ օտար մշակույթի ու արժեքների կույր ընդօրինակումն ու անքննադատ «սոցիալական պատճենահանումը» սպառնում է գոյության սեփական հիմքերին: Ներքին նախաձեռնությունից զրկված ժողովուրդն արագորեն վերասերվում է համաշխարհային քաղաքակրթության լյումպենի՝ կարոտ դրսից տրվող ողորմության: Անցումային փուլում գտնվող հետխորհրդային հասարակությունների սոցիոմշակութային արժեքների համար արևմտյան գայթակղության էությունը ոչ թե այն է, որ այդ քաղաքակրթությունը դարձել է «ռեֆերենտ խումբ», և որի հետ համեմատությունը ոտնահարվածության զգացում է առաջացնում, այլ օտար փորձի ոչ համարժեք ընկալումը: Խնդիրն այն է, որ արևմտյան մշակույթի և արժեքների ներքին նուրբ խաղը, որի էությունն աշխատանքի ճգնակյացության և հանգստի հերոնիզմի զուգակշռությունն է, հեռավորության վրա չի ընկալվում: Օտար մշակույթը չի կարող մյուսներին փոխանցել իր ճգնակյացությունը, մինչդեռ սպառման բարձր մակարդակի, կոմֆորտի, հաճույաշատ կենցաղի և զվարճալիքների արտաքին պտուղները ներծծվում են որպես թմրադեղ: Արդյունքում ներքին դիմադրողականությունից զրկված և օտարի նկատմամբ ընկալունակ անցումային հասարակության մշակույթը զրկվում է քաղաքացիական պատասխանատվությունից և աշխատանքային ստեղծագործ ոգուց, իրական սոցիոմշակութային ադապտացիայի փոխարեն տեղի է ունենում «վիրտուալ ադապտացիա»: Արևմտյան արժեքների հաճույաշատ վայելքների բազմոցաթիկնաթոռային ընկալում-հարմարումը, աշխատանքային իրական ճգնակյացությունից անտեղյակությունը խանգարում են իրապես ներառվել, ադապտվել տրանսֆորմացիոն հասարակության ռիսկաշատ հարաբերություններին ու փոխակերպվող արժեքներին: Անցումային փուլում գտնվող ժամանակակից

¹⁴ Տե՛ս «Философия истории», под редакцией А. С. Панарина, Москва, 1999, էջ 94-102:

¹⁵ Տե՛ս А. Тойнби, Постигание истории, Москва, էջ 515-516:

հետխորհրդային հասարակությունների սոցիալական ավերի և ազգաբնակչության զգալի մասի լյուծակենացման երևույթը ոչ միայն (գուցե նաև՝ ոչ այնքան) սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն ունի, այլև սոցիոմշակութային: Այս ամենի հիմքում ընկած է ոչ այնքան անցյալից ժառանգորդված հետամնացությունը, քաղաքակրթական ապակողմորոշումը, որքան սեփական մշակույթից, նորմերից և ավանդույթներից հրաժարումը: Ըստ ամենայնի վիրտուալ ադապտացիայի դեմ պայքարի ամենահուսալի և գործուն միջոցը կլինի սեփական քաղաքակրթական նույնականության իմացությունը, հավակնությունների ու հնարավորությունների հստակ սահմանազատումը: Անցումային հասարակությանն անհրաժեշտ է ոչ միայն տեխնոլոգիական հեղաշրջում, այլև սեփական մշակույթի ու ավանդույթների վրա հիմնված հոգևոր հեղաշրջում: Մինչդեռ տրանսֆորմացիոն հասարակությունը շատ հաճախ զբաղվում է արևմտյան հետդասական արվեստի ու մշակույթի սուսկական նմանակմամբ, ինչն ավելի է խորացնում շվար մարդու քաղաքակրթական ապակողմորոշումը: Այս երևույթի պատճառը մշակույթի ապասրբազնացման (դեսակրալիզացիա) գործընթացի հապաղումն էր¹⁶: Բանն այն է, որ կրոնի խաթարված դիրքերի փոխարեն սկսած XIX դարից սրբազնացվում էր (սակրալիզացիա) մշակույթը, ամենից առաջ՝ գեղարվեստական գրականությունը: Այն ընկալվում էր որպես ճիշտ ապրելու ուղեցույց-հանրագիտարան՝ դրական ընդունելի վարքն ընդօրինակելի, բացասականը պախարակելի: Խորհրդային շրջանի գաղափարայնացված մշակույթի պետականորեն հովանավորվող սրբազնացումն ավարտվեց 1991-ին, իսկ մինչ այդ «սրբազնացման» արդյունքում ցանկացած հրապարակային խոսք, ելույթ, ՋԼՄ-ի հրապարակում ընկալվում էր որպես «կանոնական», որպես քարոզ, «վարժապետություն»: Խորհրդային կայսրության կործանումից հետո սկսված ապասրբազնացման գործընթացին ժողովուրդն անպատրաստ էր, ինչով էլ բացատրվում է տարիքային տարբեր խմբերի տարամիտվող վերաբերմունքը դրա նկատմամբ: Եթե ավագ սերնդի ներկայացուցիչներն իրենց բողոքն ու վրդովմունքն են արտահայտում ՋԼՄ-ի, ամենից առաջ հեռուստատեսության հասցեին, որոնք, նրանց կարծիքով, պղծում, անտականացնում են հասարակական բարքերը, ապա երիտասարդները ցանկացած հրապարակային ինֆորմացիա, հատկապես մասսայական մշակույթի կրքաշատ կադապարներով ստեղծված գործերն ընկալում են որպես հորդոր այն բանի, թե «ինչպես պետք է ապրել»: Ի տարբերություն նախորդ ժամանակների՝ ընդօրինակելի են դառնում էկրանային հակահերոսների պատկերները: Ավելորդ է ասել, թե որքան վտանգավոր է ստեղծված իրավիճակը, ուստի դրա հաղթահարումը մեծապես պայմանավորելու է տրանսֆորմացիոն հասարակության քաղաքակրթական ելքը: Սոցիոմշակութային ազդեցիկայի թիրախի վիճակում հայտնված անցումային հասարակության համար ապասրբազնացման պրոցեսի նորմալ ընթացքը և ադապտիվ-ադապտացիոն գործունեության քաղաքակրթորեն ընդունելի վիճակը կապված են հասարակական այնպիսի ինստիտուտների սոցիալական դերի աճի հետ, ինչպիսիք են ընտանիքը, եկեղեցին, կրթա-դաստիարակչական ողջ համակարգը: Ցավոք, մասսայական արվեստի սոցիոմշակութային ազդեցիկային դիմակայելու իմաստով փոխակերպվող ժամանակակից հասարակությունը պարծենալու քիչ հիմքեր ունի, քանի որ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր զարգացումների տեսանկյունից այն կարծես թե կորցրել է իր ներքին դիմադրողականությունը և, որ ամենակարևորն է, ազգային որոշակիության ու քաղաքակրթական ինքնության պահպանման իմունիտետը: Մինչդեռ միշտ պետք է նկատի ունենալ, որ «ցանկացած ազգ կամ հասարակություն, որը չի կարող կործանված հնի

¹⁶ Ст'ю В. Страда, В свете конца, в предвостии начала. "В раздумьях о России. XIX век", Москва, 1996, էջ 30:

փոխարեն ստեղծել նոր սոցիոմշակութային կարգ, դադարում է «առաջատար» պատմական ազգ լինելուց և դառնում է մարդկային ազգագրական նյութ, որից կօզտվեն առավել ստեղծագործ ու կենսունակ ազգերը»¹⁷:

Սոցիոմշակութային ադապտացիան քաղաքակրթորեն ընդունելի հուն կմտնի այն դեպքում, երբ հասարակության մեջ հաստատվի սոցիոմշակութային հավասարակշռություն, որը համակարգի կայունության պահպանման ամենակարևոր պայմանն է: Դա տեղի կունենա այն ժամանակ, երբ հասարակության մեջ կամրագրվի հարաբերությունների ու արժեքների հարաբերաբար գերիշխող որևէ տիպ և դրան համապատասխան սոցիալական նույնքան գերիշխող խավ:

Г. А. СОГОМОНЯН - Особенности социокультурной адаптации в переходном обществе. - В обществе, находящемся в состоянии аномии, отношения и ценности носят релятивный, ситуативный характер, чем и обусловлены особенности социокультурной адаптации. С этой точки зрения в статье анализируются адаптивно-адаптационные процессы, свойственные трансформационному обществу.

Особенными формами социокультурной адаптации в переходном обществе являются конформизм, инновация, ритуализм, невмешательство, бунт. В условиях неопределенности жизни и всеобщего недоверия деформируется человек, вследствие чего формируется новый тип личности - "человек-масса". В результате десакрализации культуры вместо нормальной адаптации происходит "виртуальная адаптация". Цивилизованно приемлемая социокультурная адаптация и стабилизация трансформационной системы произойдет только тогда, когда общество вернется к "нормальному" функционированию и самовоспроизводству, когда аномия, отчужденность и трансформационный риск перестанут быть доминирующей основой социокультурной адаптации.

¹⁷ Տե՛ս Ս. А. Сорокин, *Главные тенденции нашего времени*, Москва, 1993, էջ 107: